հանրապէս։ Պատուական «Մշակի» ընթերցողներին արդէն յայտնի կը լինի, որ Սուլթանը ուղղակի կերպով յայտնում է իր միջամտութիւնը և սրա համար 20,000 զօրք է ուզում ուղարկել Թունիզ. այդ պատճառով այստեղի բոլոր լրագիրները սաստիկ կծու յօդուածներ են գրում ասելով որ սուլթանը անիրաւարար է վարւում, քանի որ 50 տարի է, որ Թունիզը տաճկական խնամակալութեան տակ չէ գտնւում։

«Times — Տայմս — լրագիրը մի և նոյն կարծիքն է հաստատում և բոլորովին անտեղի է համարում, որ Անգլիան իր նաւատորմը ուղարկէ Աֆրիկա։ Կ. Պօլիս գտնւող ֆրանսիական դեսպան պարոն Տիսօն բողոքել է սուլթանին ասելով, որ Ֆրանսիան ամեն միջոց կը գործածէ տաճիկ զօրքերին արգելելու Թունիզի ափերին մօտենալը։ Ի հարկէ, խրումիրները վաղ թէ ուշ պէտք է ընկճւեն, Թունիզի բէյի Մօհամմէդ-էլ-Սադօկն էլ թանգ կը վճարէ իր յիմարութեան համար. իսկ թէ սուլթանն էլ շատ կը յամառի, ֆրանսիացիք պատրաստ են ամենայն սիրով ռումների ձեռքով արնոտած ռեխը նորից արիւնաշաղախ անել. սպասենք և շուտով կը տեսնենք։

Մի երևոյթ աւելի է աչքի ընկնում, այն է որ երբ Յունաստանը պատերազմի էր պատրաստւում յուսադրվելով Ֆրանսիայի—Գամբէտայի—վրա,—այստեղի նշանաւոր բոլոր լրագիրներում, բացի թղթակցութիւններից, երևում էին և առաջնորդող յօդուածներ յոյների օգտին. բայց հիմա մի խօսք անգամ չէ երևում դրանց մասին։ Բաւական չէ, որ այլ ևս Յունաստանի խնդիրը չեն պաշտպանում, այլ բոլորովին հակառակ գիրք են բռնել մի քանի լրագիրներ, որոց մէջ «Le Mot d'ordre» աւելի կծու լեզու է գործադրում յոյների դէմ, անուանելով նրանց դանդաղ, ծոյլ, անընդունակ, անարժան զաւակներ Լիկուրգոսի և Թէմիստոկլէսի։ Վերոյիշեալ լրագիրը ոչինչ լաւ բան չէ գտնում Յունաստանում, երկիրը անբերրի, արհեստի և գիտութեան բացակայութիւն, մարդիկ վայրենի, ընդունակ միայն տան ծառայ լինելու, հաչւապահներ, խաբեբաներ և այս բանում հրէաներին գերազանցող։ Մի խօսքով յօդուածագիրը խիստ ծայրայեղութեան է հասնում. մինչև ասում է, որ Յունաստանը գոյութիւն ունի միայն մի քանի քաղաքագէտների (Գամբէտայի) գլխներում և ոչ իրապէս։

Հին դարերում պարապում էին հէնութեամբ (ծովային աւազակութեամբ), ասում է պարոնը, իսկ հիմայ իրենց հայրենիքը թողած օտար երկիրներում վաճառականական աւազակութեամբ են պարապում։ Ո՞ւր են, ո՜ւր, հարցնում է պարոնը, Ալէքսանդր մեծի և Արիստոտելի զաւակները. թողած իրանց երկիրը լցվում են Մարսէյլում, Լիօնում, Գէննուայում։ *)

Վերջացնում է պ. յօդուածագիրը այս խօսքերով —Ինչ օգուտ կարող ենք սպասել յոյներից՝ նրանց գործերում խառնվելով, բաւական է ինչքան որ ուսումնարաններում մեր գլուխները հոտեցրիք Աթէնքով և Կորնթիայով, հիմա թողէք մեզ հանգիստ։ Ինքն իրեն հարց է տրվում մարդու առաջև. թէ հապա ինչ կասեն խեղճ հայերի մասին, եթէ սրանք յանդգնեն սրով բողոքել վայրենի տաճիկների կամայականութեան դէմ իրենց մարդկային իրաւունքները պաշտպանելու։ Ես գոնեա հաւատացած եմ, որ հայերին աւելի վատ գոյներով նկարեն աշխարհի առաջ. որովհետև վատ օրինակներ աւելի շատ են գտնում մեր մէջ քան թէ լաւերը. օրինակի համար, մօտ օրերս այստեղ բռնեցին մի հայ Կարապետ անունով, որը Մարսէյլում ահագին գումար էր գողացել և ուզել է փարիզում մի կօկօտի հետ լաւ ժամանակ անցկացնի այսպէս հեշտ աշխատած փողերով։

Այստեղի յետադէմ կուսակցութիւնները սըկսում են, համարեա, բոլորովին թուլանալ և խեղդւող մարդու նման կպչում են ամեն բանին ազատվելու յուսով։ Ինչպէս բոլոր երկիրներում, նմանապէս Ֆրանսիայում կայ օրէնք, որի զօրութեամբ հրաժարեցնում են մարդուն ծառայութիւնից երբ նա հասնում է մի որոշեալ հասակի, ուր անընդունակ է կատարելու իր պաշտօնը։ Կայսերական հրամանատար պարոն Բուրբակին հրաժարեցրած է հասարակապետութեան կարգադրութեամբ իր պաշտօնը կատարելու այլ ևս անկարող լինելու պատճառով։ Յետադէմները վրդովեցան այս կարգադրութեամբ, և ուզեցին ցոյց տալ առաջադէմներին, որ իրանք պատրաստ են դեռ ևս դիմադրել ամեն բանում սրանց. այս բանի համար որոշեցին բանալ մի ստորագրութիւն և պարոն Բուրբակուն տալ ընծայ մի պատուի սուր (une épée d'honneur)։ Ես չեմ կարող յիշելու յարգելի ընթերցողներին թէ, ով էր հարցացոյցը— ինիխատոր — միայն լաւ գիտեմ, որ յետադէմների գլխաւոր օրգաններից L'Union — Միութեան — և la Patrie — Հայրենիք — նուիրեցին հարիւրական ֆրանկներ և յորդորում էին հասարակութեանը մի և նոյնը անել։ Պէտք է ասել, որ լաւ ֆիասկօ դուրս եկաւ և յետադէմները բոլորովին խայտառակվեցան. որովհետև այս առիթով պատերազմական նախարարը արգելեց խիստ կերպով զինուորներին մասնակցել այդ բանում։ Խայտառակութիւնը կատարեալ եղաւ աւելի այն ժամանակ, երբ Բուրբակին մերժեց բոլորովին այդ պատուի սուրը։

Բաւական չէ որ փարիզը տօնեց հռչակաւոր Վիկտոր-Հիւգօի ութսունամեայ յոբելեանը շքեղ կերպով, այլ մինչև անգամ էյլօ կոչված պողոտան (Avenue d'Eylau) կը կոչվի այսուհետև (Avenue Victor Hugo) որի համար վերոյիշեալ պարոնը յայտնեց գրաւոր կերպով իր խորին շնորհակալութիւնը այս կարգադրութեան համար։

Այո՛, չէ կարելի չը համակրել, չը սիրել այսպիսի մի ազգ, որ գիտէ վարձատրել հայրենիքին ծառայած և ծառայող մարդկերանց՝ անմահացնելով նրանց անունները։

Նամակս վերջանալու ժամանակ հեռագիրը բերեց համբաւ թէ արդէն խաղաղութեան դաշնագրի տակ ստորագրեց Թունիզի բէյն առանց որ և է դժկամակութեան. բայց գուցէ ընթերցողը հարցնէ թէ Թունիզի բէյն այստեղ ինչ գործ ունէ, քանի Ֆրանսիան միայն խրումիրներին էր ուզում պատժել։ Ես ինքս այս հարցին ոչինչ չեմ կարող պատասխանել, այլ ստիպված եմ մէջ բերել la Verité-ի աշխատակից Ալպէստի հետևեալ խօսքերը։ Պարոններ, ասում է յօդուածագիրը, չը կարծէք թէ ճշմարիտ, Ֆրանսիան գործ ունի խրումիրների հետ, ոչ բոլորովին, այլ արևելքում մի հին բան կայ դեռ առանց վճռի, և սրա համար հնարեց խրումիրների պատժելը, որոնց գոյութեան վրա կասկածում ենք։

Լանգիշ

---

*) Պարոն յօդուածագիրը մոռացել է յիշել, որ Փարիզում պակաս չեն յոյները. համարեա ամեն օր մի քանի նոր տիպարներ են երևում։ Որ բոլորին կուզէք մտէք Սուֆլէ սրճարանը և կը տեսնէք տասնեակ յոյներ կօկօտների հետ նստած ամբողջ ժամանակը դոմինօ են խաղում. դեղի համար մէկի ձեռքում լրագիր չէք տեսնի, այնքան աղմուկ են հանում, որ մինչև անգամ ուրիշներին խանգարում են լրագիր կարդալ. մի անգամ կողքիս նստած ֆրանսիացի բացականչեց բարձր ձայնով— Jusqu'à quand donc ces Niapoulos continueront de nous embêter ?.

Մ. Հ.

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

Կ. Պօլիս, 16 մայիս

Անգլիոյ դեսպանը պ. Գօշէն մեկնեցաւ, Լօրդ Տըֆըրէն քիչ օրէն կուգայ։ Կօշէն Մօնթէնէկրոյի և Յունաստանի հարցերն կարգադրեց, նոր դեսպանը գանձային բարեկարգութեանց և Հայաստանի խնդրոյն պիտի աշխատի։ Քիչ ատենէն Հայաստանի բարեկարգութեանց մասին ձեռք առնուած միջոցներուն վրա աղէկ տեղեկութիւններ պիտի ստանանք, այժմ անոնց վրա խօսելն օգտակար չենք սեպեր. ոչ շատ ուշ կիմանաք։ Պատրիարքն ալ աւելի լաւատես եղաւ և առ այժմ երկու ամսվան համար հրաժարականը ետ առաւ, զի իրեն մեծ յոյս տուին որ երկու ամսուան մէջ շատ բան պիտի կարգադրուի։ Ազգ. ժողովոյ գումարման օրը, յորում պատրիարքի հրաժարականը խնդրոյ նիւթ էր, առաւօտուն Ներսէս սրբազան Սաիդ բաշայի գնաց տեսակցութեան. այս տեսակցութենէն կախում ունէր հրաժարականին ետ առնելու որոշումը։ Սաիդ որ վարպետ մարդ մէ, աղէկ հասկցած է թէ Ներսէսի հրաժարելով հայոց խնդիրը չը մարեր, այլ թերևս աւելի բորբոքի, ուստի ինքն ալ յուսատու խոստումներ ըրած է պատրիարքին և ըսած է թէ քիչ մը ատեն թող ըսպասէ և պիտի տեսնէ թէ գոհ պիտի ըլլայ։ Պատրիարքը բացարձակապէս առաջին նախաբարին չէր կրնար դիմադրել, վասն զի քաղաքագիտական գործ մը ըրած չէր ըլլար, ուստի խոստացաւ դեռ երկու ամիս ալ պաշտօն վարել, մանաւանդ որ Անգլիոյ դեսպանատան կողմէ ալ լուրջ ապահովութիւններ ստացած էր։—Սաիդի ապարանքէն ուղղակի ժողովի եկաւ։ Մէկուկէս ժամ ուշացած էր, ժողովքը կը սպասէր, բայց առանց անհամբեր ըլլալու, զի եղելութիւնը գիտէր։ Յոգնած ու ցաւագար, Ներսէս տկար ձայնով մը արտասանեց բացման ճառը, զոր մեր թերթերը դեռ չը տպեցին, կարելի է այս երեկոյ հրատարակեն. ահաւասիկ խօսածները։

Երեսփոխանք հայոց. «Աստուծոյ օրհնութեամբը այս ութերորդ անգամ պատիւ ունիմ բանալ Ազգ. ժողովը, անակնկալ պատճառաւ զձեզ սպասել տուի այսօր, ներողամիտ լերուք. կարողութիւն և զօրութիւն կը մաղթեմ ձեզ։»

«Առեննապետ էֆէնդին ձեր նիստերը Աստուծոյ աղէկ կը վարէ. ձեզ մատուցեալ թաղական և ուսումնական ծրագիրներն քննելով ընդ փոյթ կը քուէարկէք, շատ կարեւոր են ասոնք մեր դըպրոցներու և թաղերուն բարեկարգութեան համար»։

«Այս շրջանիս դուք ձեր պարտքը կատարեցիք, մենք չը կրցանք մեր պարտքը կատարել, անոր համար վերջին նիստին գրեցի ձեզ որ ազատ համարէք զիս ապրիլի վերջը պատրիարքական պաշտօնէն ու աւելի առողջ, աւելի կորովամիտ մէկը ընտրէք իմ տեղը, որ աւելի խընամով ներքին և արտաքին գործերը նայի. դըպրոցներու և այլն բարեկարգութեան հոգէ.»

«Ձեր առեննապետները և վարչական խորհուրդը շատ թախանձեցին զմեզ որ մնամք մեր պաշտօնին վրա, բայց անձիս առողջութիւնը չը ներեր պէտք եղածին պէս ուշով, փութով, կորովով վարել զայս պաշտօն, չը կրցանք խօսք հասկցնել և երկու ամսի համար խօսք տուի շարունակել զայն մինչև այս տարուան յուլիս ամսոյ վերջը, ալ անկէց յետոյ ազատ պիտի համարէք զիս։»

«Աւելի խօսքեր ընել անօգուտ կը համարիմ, վճռականիս յայտնի է, թէ՛ բարեխնամ տէրութիւնք կը խոստանան բարւոք վարչութիւն և բարեկարգութիւն տալ հայաբնակ գաւառաց։»

«Կը յուսամք միշտ, յոյս քրիստոնէից սեփհականութիւնն է. Աշխատութիւն, սէր, միութիւն, միմեանց վրա վստահութիւն և Աստուած պիտի օրհնէ զձեզ, զօրացնէ, կազդուրէ և ձեր ջանքերը արդիւնաւոր ընէ։»

Եթէ երկու ամիս պատրիարքական հարց չունենք, ուրիշ մեծ և փոքր խնդիրներ չեն պակսիր։ Հայաստանի մէջ քրդական ոյժերը միացնելու և կազմակերպելու խորհուրդները պաշտօնական կերպարանք կառնեն։ Քիւրդ կամ զուրդ Իսմայիլ բաշան, Կարնոյ հին կառավարիչը, Տիգրանակերտի կողմերը հրամանատարի պաշտօն կը ստանձնէ, իբր թէ քիւրդերն պիտի զսպէ, բայց հետը ծրագիր կը տանի այդ կողմի քիւրդերն կազմակերպելու Իպագուլլայի հետ միաբան ընթանալու համար։ Լօրդ Տըֆըրէնի ներկայացնելիք ծրագրէն կախում ունի քրդաց գործոն կամ անգործ մնալը։

Բ. Դրան հայ պաշտօնեայ մը անցեալները կըսէր «Հայաստանի բարեկարգութեանց խնդիրն ամեն հարցէ աւելի մտատանջութիւն կը պատճառէ մեր կառավարութեան. խնդիրն Տուլչինեօյի մը կամ Թէսալիայի մը վրայ չէ. մօտաւոր ապագայի մը մէջ ամբողջ Թրքական Ասիա սահմանանց ձեռքէն երթալու երկիւղը կը տիրապետէ» ալ յաւիտենական to be or not to be-ն է։

Երկրորդական խնդիրներ կը շրջապատեն բարեկարգութեանց և քրդական միութեան հարցը, և յաճախ ուշադրութիւնն կը գրաւեն։ Մեր մտաւոր շարժման դէմ զապողական միջոցներն կը շարունակին։ Երէկ բանտին մէջ կը մեռնէր Տնտեսեան, անծանօթ և անբնական մահով մը. այսօր Գաֆաֆեան ի բանտի Տնտեսեանի հետեւելու կը պատրաստուի, վաղը ո՛վ գիտէ կարգը որուն է։

Խեղճ Տնտեսեան, որչափ բարի, ազնիւ և համեստ էր. Ինչքան կը սիրէինք զինքը։ Բաւական տարիներ են, խումբ մը երիտասարդներ, որոց միրուքը ճերմակ ունի հիմա, Կիլիկիան կը մտածէին, հոն կը խրկէին Տնտեսեանը և հոն կը մոռնային զինքը. ու Տնտեսեան առանց վարձատրութեան Կիլիկիայի տղաներուն կարդալ կը սովրեցներ։ Ազգային վերականգման գաղափարը ի գործ դնելու սկսող առաջին մշակներէն էր։—Փառաւոր թաղում, հազարաւոր յուղարկաւորք, բացաշունչ քարոզներ. բայց այս ամենը արգելք չեն ըլլար որ Տնտեսեանի մանուկ զաւակներն ու կինը անխնամ չը մնան. Երբ որբ տղայոց ապաստարան մը։

Ասոնց հետ միասին Բ. Դուռը Հայաստանէն բազմաթիւ քիւրդեր կը բերէ հայերէն գիտցող. Ինչպէս զանազանել հայերէն, երբ պանդուխտ մը կը տեսնես, երկու քաջալերական ու մխիթարական խօսքեր ընես, չես գիտեր թէ եղբայր մ՚է թէ լրտես մը։—Երբ պանդուխտ տղայ մը տանդ մէջ սպասաւոր կառնես, արդեօք ոստիկանութեան ականջն է. Խոհեմ ու զգոյշ շարժելը սկսած է ամենուն բերանը պտըտիլ։

Բայց լրտեսութեան համար ինչ հարկ քիւրդեր բերել, միթէ մեզ պակաս են մատնիչք։ Տխրութեամբ կը լսեմ—Կ. Պօլսոյ մատնութիւններն մինչև ի Վան կը հասնին։—Սովելոց յանձնաժողովին, ոչ մերինին այլ թրքաց հաստատածին, յորում երօպացիք ալ կը գտնուին, կը գրեն իրենց ներկայացուցիչք թէ «այն հայերը որոց ձեռօք ցորեն ու դրամ կը բաժնէինք սոված ժողովուրդին, ձերբակալեալ են ամբաստանութեան ներքև, անհնար պիտի ըլլայ մեզ ուրիշներու ձեռօք ընել, զորս գտնելն ալ շատ դժուար է»։

Հոս ալ մանր մունր դէպքեր ցոյց կուտան տաճկաց կասկածանքներուն որքան յառաջացած ըլլալը։ Ոստիկանութեան պաշտօնեայ մը աղէկ աչքով չը տեսներ Ղալաթիոյ Լուսաւորիչ վարժարանի աշակերտաց մարմնամարզի փորձերն ու շատ դըժուարութիւն կուտայ եկեղեցւոյ առաջնորդը համոզել ոստիկանութիւնը թէ այդ անմեղ շարժումներն հայկական բանակի մը նախապատրաստութիւններն ըլլալէ հեռի են։

Հայկակ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 մայիսի։ Խնդիրքի համեմատ, առողջութիւնը խանգարված լինելու պատճառով հրաժարեցրած են պաշտօններից՝ պատերազմական մինիստր կոմս Միլիւտին և Ֆինլանդիայի գեներալ-նահանգապետ կոմս Ադլէրբերգ երրորդ, թողնելով նրանց երկուսին գեներալ ադիւտանտների պաշտօնում։ Հրամայված է լինել պատերազմական մինիստրութեան կառավարիչ գեներալ լէյտենանտ Վանովսկուն, իսկ Ֆինլանդիայի գեներալ-նահանգապետ կոմս Գէյդէն երկրորդին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 մայիսի։ „Правит. Вѣстн.“ լրագրում տպված է որ „Русскій Курьеръ“ լրագրի հատով ծախվելը արգելված է երեք ամսով, իսկ „Свѣтъ и Тѣни“ ամսագիրը դադարեցրած է վեց ամսով։ Երէկ Գատչինոյի պալատի մէջ թագաւոր կայսրը ընդունեց Տեկինեան պատգամաւորութիւնը, ընծայեց Տիկմա-Սարդարին մի պատուաւոր սուր, ոսկեայ ժամացոյց և շնորհեց միլիցիայի մայօրի աստիճանը։ Պատգամաւորութեան միւս անդամներին ոսկեայ մի մի ժամացոյց շղթայով։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 մայիսի։ Պետական բանկի 5°/₀ տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր. 75 կ., երկրորդ 94 ր. 25 կ., երրորդ 94 ր. 25 կ., չորրորդ 94 ր. 12 կ., ներքին 5°/₀ առաջին փոխառութեան տոմսակը արժէ 225 ր. 25 կ., երկրորդ 219 ր., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 93 ր. 62 կ., երկրորդ 93 ր. 50 կ., երրորդ 93 ր. 62 կ., ոսկի 8 ր. 25 կ.։ Ռուսաց 1 րուբլ Լոնդոնի վրա արժէ 24,40 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 208 մարկ 75 պֆ., Փարիզի վրա արժէ 257 ֆրանկ։ Բօրսայի տրամադրութիւնը շատ ամուր է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ